

2004թ. ՀՀ ԱՎԾ կողմից միջազգային համագործակցության շրջանակում իրականացված ծրագրերը

<i>Ծրագրի անվանումը</i>	<i>Իրականացման գործընթացը</i>
SUSAՒՍ-վիճակագրություն 4	1998թ. ապրիլի 22-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացված «1997թ. հունիսի 30-ին ստորագրված SUSAՒՍ-ի 1996թ. ծրագրի ֆինանսավորման հուշագրի» շրջանակում ՀՀ-ում վիճակագրության բարեփոխման համար 2000-2002թթ. տրամադրվել է 700,0 հազ.ԵՎԲ: Նշված ծրագիրը ՀՀ ԱՎԾ-ն իրականացրել է 2000թ.-ից: Ծրագրով նախատեսված միջոցառումները ամբողջությամբ կատարված են: Ֆինանսական հոսքերի կառավարումը կատարում է Եվրամիության կողմից առաջադրված «ՍիիեւԴի-կոմունիտաիր» կազմակերպությունը: ՀՀ ԱՎԾ արտաբյուջետային հաշվից 2004թ.-ին ընդհանուր առմամբ ծախսվել է 7635.8 հազ.դրամ:
SUSAՒՍ-վիճակագրություն 6	Ծրագրով նախատեսված (նախահաշվով՝ 123500 եվրո կամ 77932.5հազ.դրամ) միջոցառումներն ամբողջությամբ կատարված են 2004թ. վերջի դրությամբ: ՀՀ ԱՎԾ արտաբյուջետային հաշվից 2004թ.-ին ընդհանուր առմամբ ծախսվել է 76902.5 հազ.դրամ:
UNFPA-Հայաստանում կանանց, տղամարդկանց և երիտասարդների վերարտադրողական առողջության բարելավման ծրագիր	Ծրագրով 2004թ. միջոցառումների իրականացման համար ՀՀ ԱՎԾ արտաբյուջետային հաշվից նախատեսված 15831.0 հազ. դրամի դիմաց 2004թ.-ին ծախսվել է 12606.075 հազ.դրամ:
SIDA-Ժամանակի օգտագործման վիճակագրություն	Շվեդական միջազգային զարգացման գործակալության (ՄԻԴԱ) ֆինանսավորմամբ 2004թ.-ին իրականացվել են «Ժամանակի օգտագործման հետազոտություն» նախագծի աշխատանքները: Այս նախագծի գծով ՀՀ ԱՎԾ արտաբյուջետային հաշվից իրականացված ծախսերը 2004 թ. կազմել են 2848.7 հազ. դրամ՝ նախատեսված 3122.1 հազ. դրամի դիմաց:
SIDA- շրջակա միջավայրի վիճակագրություն	Շվեդական միջազգային զարգացման գործակալության (ՄԻԴԱ) ֆինանսավորմամբ 2004թ. ընթացքում իրականացվել են «Շրջակա միջավայրի վիճակագրություն» նախագծի աշխատանքները, որի գծով ՀՀ ԱՎԾ արտաբյուջետային հաշվից իրականացված ծախսերը 2004թ. կազմել են 1619.2 հազ. դրամ՝ նախատեսված 1683.4 հազ. դրամի դիմաց: